

Հաստատված է

«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան»

ՊՈԱԿ ռեկտորի

_____ . _____ 2015 թվականի
թիվ _____ հրամանով

Ռեկտոր Ռ.Կ.Միրզախանյան

Ընդունված է

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի 2015 թ.

----- թիվ ---- նիստում

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) Մանկության ժամանակակից հիմնախնդիրների ուսումնասիրման գիտա-հետազոտական լաբորատորիան (այսուհետ՝ Լաբորատորիա) Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանում է:
2. Լաբորատորան իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ, Համալսարանի կառավարման մարմինների որոշումներով, Համալսարանի ռեկտորի հրամաններով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:
3. Լաբորատորիան ունի իր անվամբ ձևաթուղթ:

II. ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

4. Լաբորատորիան անմիջապես ղեկավարում է Լաբորատորիայի վարիչը, որին նշանակում և պաշտոնից ազատում է Համալսարանի ռեկտորը:
5. Լաբորատորիայի վարիչն անմիջականորեն ենթակա և հաշվետու է ռեկտորին:
6. Լաբորատորիայի վարիչի իրավունքներն են՝
 1. Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն, փաստաթղթեր:
 2. Ներկայացնել առաջարկություններ Համալսարանի ռեկտորին՝ Լաբորատորիայի աշխատողներին խրախուսելու կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:
 3. Ներկայացնել առաջարկություններ Լաբորատորիայի գործունեությունն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով:
 4. ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:
7. Լաբորատորիայի վարիչի պարտականություններն են՝

1. Ղեկավարել, համակարգել և վերահսկել լաբորատորիայի ընթացիկ գործունեությունը:
2. Ստորագրել Լաբորատորիայի կողմից ներկայացվող փաստաթղթերը, ապահովել Լաբորատորիայի գործառույթների շրջանակում զեկուցագրերի, տեղեկանքների, առաջարկությունների և այլ փաստաթղթերի կազմելու գործընթացը:
3. Կատարել աշխատանքի բաժանում Լաբորատորիայի աշխատողների միջև:
4. Մշակել և Համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել բազային ֆինանսավորման հայտը:
4. Հետևել լաբորատորիայի գիտաշխատողների կողմից ծրագրի կատարման ընթացքին:
5. Վերլուծել և ամփոփել լաբորատորիայի գիտաշխատողների եռամսյակային և տարեկան հաշվետվությունները:
8. Լաբորատորիայի վարիչը պատասխանատու է Լաբորատորիայի կողմից իրականացվող աշխատանքների որակի և Լաբորատորիայի առջև դրված խնդիրնրի պատշաճ և արդյունավետ լուծման համար:

III. ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Լաբորատորիայի խնդիրնեն են՝
 1. Նպաստել մանկավարժական գիտական ներուժի զարգացմանը, հանրապետության և միջազգային գիտական ծրագրերում նրա արդյունավետ օգտագործմանը:
 2. Իրականացնել մանկավարժության ուղղությամբ գիտական, գիտահետազոտական, գիտամեթոդական, փորձագիտական և գիտաուսումնական աշխատանքներ:
 3. Բացահայտել մանկության առկա հիմնախնդիրները մեր հանրապետությունում:
- Այդ նպատակով.
- անցկացնել հետազոտություններ՝ հիմնախնդրի վերաբերյալ,
 - մշակել այդ ոլորտում պետական քաղաքականության գիտական ապահովմանը նպաստող առաջարկություններ:

10. Լաբորատորիան իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1. ցուցաբերում է ակտիվ մասնակցություն գիտակրթական բարեփոխումներին.
2. համագործակցում է Հա,ալսարանում գործող այլ լաբորատորիաներիի և ստորաբաժանումների, հրատարակվող գիտական ամսագրերի, հանդեսների խմբագրական-հրատարակչական խորհուրդների հետ.
3. համագործակցում է այլ բուհերի գիտահետազոտական կենտրանների և ԳԱԱ ստորաբաժանումների հետ.
4. կազմակերպում է ինքնուրույն գիտական սեմինարներ, գիտաժողովներ, կլոր սեղաններ և այլ միջոցառումներ.
5. իրականացնում է գրահրատարակչական գործունեություն:

IV. ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

6. Լաբորատորիայի աշխատողները կատարում են իրենց անմիջական ղեկավարի հանձնարարականները, աշխատանքային պայմանագրով (առկայության դեպքում՝ պաշտոնի անձնագրով), ներքին կարգապահական կանոններով և այլ իրավական ակտերով սահմանված պարտականությունները և պատասխանատու են դրանց կատարման համար: Լաբորատորիայի աշխատողներն իրականացնում են Լաբորատորիայի գործառույթներից բխող աշխատանքներ: Լաբորատորիայի աշխատողներն իրականացնում են Լաբորատորիայի գործառույթներից բխող աշխատանքներ: Լաբորատորիայի աշխատողները օգտվում են ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև Համալսարանի կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով, աշխատանքային պայմանագրով (առկայության դեպքում պաշտոնի անձնագրով) ամրագրված իրավունքներից:
7. Լաբորատորիայի աշխատողները պարտավոր են ենթարկվել Համալսարանի ներքին կարգապահական կանոններին, պահպանել աշխատանքային էթիկայի կանոնները:
8. Լաբորատորիայի կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատվում և փոփոխվում է Համալսարանի ռեկտորի հրամանով:

